ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ԼԳ-ՏՊ/ 120-111

Գազասպառման համակարգի միացման համար տեխնիկական պայմանների տրամադրման աշխատանքների

ք. Վանաձոր *«05» օգոստոս 2025 թ.*

ՀՀ Վարչապետի աշխատակազմ այսուհետ՝ ***Պատվիրատու***, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ՝ Գ. Բոշյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն (հետագայում՝ ***Կապալառու***) ի դեմս Լոռու ԳԳՄ տնօրեն Արթուր Լևոնի Նալբանդյանի, որը գործում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 30.12.2024թ. տրված N 01/15.2/5687-2024 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով ***Կապալառուն*** (նախագծողը, հետազոտողը) ***Պատվիրատուի*** հանձնարարությամբ կատարում է Լոռու մարզ ք. Վանաձոր Նժդեհի 14 4-րդ հարկում գտնվող ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի գազասպառման համակարգի տեխնիկական պայմանների տրամադրման՝ անհրաժեշտության դեպքում նաև հետազոտական աշխատանքներ (հետագայում՝ ***Աշխատանքներ***):

1.2 ***Պատվիրատուն*** պարտավորվում է ընդունել ***Աշխատանքների*** արդյունքը և իրականացնել սույն պայմանագրի 4.1 և 4.2 կետերով նախատեսված վճարումները:

1.3 Աշխատանքները համարվում են կատարված Կողմերի միջև Աշխատանքների արդյունքի հանձնման – ընդունման Ակտը ստորագրելու պահից:

2. Աշխատանքների կատարման համար ելակետային տվյալները

2.1 ***Աշխատանքների*** իրականացման նպատակով ***Պատվիրատուն*** պարտավոր է ***Կապալառուին*** հանձնել տեխնիկական պայմանների համար անհրաժեշտ ելակետային տվյալներ:

2.2 ***Աշխատանքները*** կատարելու առաջադրանքի կատարման ընթացքում ***Կապալառուն*** պարտավոր է պահպանել առաջադրանքում և ելակետային տվյալներում պարունակվող պահանջները:

3. Կողմերի պարտավորությունները

3.1 Պատվիրատուն պարտավորվում է.

3.1.1 ***Կապալառուին*** հանձնել տեխնիկական պայմանները կազմելու համար անհրաժեշտ ելակետային տվյալները.

3.1.2 ***Միացման պայմանագիրը*** ստանալու պահից 30 օրվա ընթացքում ***Կապալառուին*** ամբողջությամբ վճարել սույն պայմանագրով ***Աշխատանքների*** դիմաց սահմանված գինը.

3.1.5 Հատուցել ***Կապալառուի*** լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են ***Աշխատանքների*** կատարման համար ելակետային տվյալները ***Կապալառուից*** անկախ հանգամանքների հետևանքով փոփոխվելու արդյունքում.

3.2 Կապալառուն պարտավորվում է.

3.2.1 ***Աշխատանքները*** կատարելտեխնիկական պայմանների համար տրամադրված ելակետային տվյալներին և սույն պայմանագրին համապատասխան.

3.2.2 Առանց ***Պատվիրատուի*** համաձայնության գազասպառման համակարգի տեխնիկական պայմանները չհանձնել երրորդ անձանց:

4. Աշխատանքների կատարման ժամկետները, գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով նախատեսված ***Աշխատանքների*** գինը սահմանվում է 10000 (տաս հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

4.2 ***Կապալառուն Աշխատանքները*** սկսում է 2025թ. օգոստոսի 05–ին և ավարտում մինչև 2025 թ. սեպտեմբերի 30-ը:

4.3 ***Պատվիրատուն*** վճարումները կատարում է սույն պայմանագրի 3.1.2 կետով սահմանված ժամկետում, կապալառուի տրամադրած վճարման փաստաթղթի հիման վրա՝ սույն պայմանագրի 9-րդ կետով նախատեսված ***Կապալառուի*** բանկային հաշվին գումար փոխանցելու եղանակով:

4.4 Վճարման փաստաթղթի հիման վրա կատարված վճարումը հավաստող անդորրագիրը և/կամ վճարման հանձնարարագիրը ***Կապալառուի*** համար հիմք է հանդիսանում աշխատանքները սկսելու և ավարտելու համար:

5. Հատուկ պայմաններ

5.1 Կողմերը երաշխավորում են, որ երրորդ անձանց մոտ բացակայում են նախագծային փաստաթղթերի հիման վրա աշխատանքներ կատարելուն խոչընդոտող կամ դրանց կատարելը սահմանափակող իրավունքներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 *Կապալառուն* պատասխանատվություն է կրում գազասպառման համակարգի միացման համար տեխնիկական պայմանների ոչ պատշաճ կազմման համար:

6.2 Տեխնիկական պայմաններում թերություններ հայտնաբերելու դեպքում *Կապալառուն Պատվիրատուի* պահանջով, անհատույց վերափոխում է այն և, համապատասխանաբար, իրականացնում է լրացուցիչ հետազոտական աշխատանքներ:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրման օրվանից և գործում է մինչ երկկողմ պարտավորությունների պատշաճ կատարումը:

7.2 Սույն պայմանագրում նշված ժամկետները կարող են փոփոխվել միայն կողմերի լրացուցիչ փոխհամաձայնության դեպքում:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2 Սույն պայմանագիրը կազմված է միևնույն իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

9.Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Վարչապետի աշխատակազմ գործուն. հասցե՝ ք. Վանաձոր Նժդեհի փող. 14 4-րդ հարկ ծանուցման հասցեն՝ ք. Երևան Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 ՀՎՀՀ՝ 02505554 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024057 հեռ. 0322-4-00-01	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Իրավաբանական հասցե՝ ՀՀ, 0091, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43 գտնվելու վայր (մասնաճ. անվ. և հասցե)՝ Լոռու ԳԳՄ, ՀՀ, 2018, ք. Վանաձոր, Չուխաջյան 2/2-3/2 ՀՎՀՀ՝ 00046317 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/հ՝ 2479104269870010 Հեռ.՝ (0322) 2-96-87, 2-96-94, ֆաքս՝ 2-96-93 էլ. փոստ՝ inbox@gazpromarmenia.am, lorygorn@gazpromarmenia.am Լոռու ԳԳՄ տնօրեն, լիազորված անձ՝
Գործերի կառավարիչ՝ _____ Գ. Բոշյան	_____ Ա. Նալբանդյան